ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 մարտի 2023 թվականի N 391 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 1239-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 22-րդ կետը «Գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո» բառերից հետո լրացնել «, բացառությամբ օտարերկրյա գործուղումների,» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 23-րդ կետով.

«23. Քաղաքացիական ծառայողի՝ օտարերկրյա պետություն ծառայողական գործուղման վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ համաձայնեցման, գործուղման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը գործուղող մարմին և Հայաստանի

Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելու, գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնելու, ինչպես նաև համապատասխան հաշվետվությունները հրապարակելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ:»:

2. Սույն որոշման գործողությունը տարածվում է ուժի մեջ մտնելուց հետո ընդունված որոշումների և անհատական իրավական ակտերի հիման վրա իրականացվող գործուղումների վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ